

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍԱՍԱՆԵԱՆՑ

ՊՐՕՖ. ԿՐԻՄՄԿՈՒ

Աղջպիսի դէպքերում նախարարները համարեա միշտ Մամիկոնեաններից էին ընտրում իրանց համար պարագլու խ: Դորանից ակներեւ է, որ Մամիկոնեանց տօհմի մտաւ որ և հոգեկան առաքինութիւնների գերազանցութիւնը ամենքը ճանաչում էին ու խոսապահում: Արդ՝ եթէ այս կարծիքը ճիշտ է, ուրեմն ի՞նչու այնուհետև նոքա աղջովին ընդ միշտ Մամիկոնեանների միշից չէին ընտրում Հայաստանի ղեկավար-իշխան, պատասխանատու դիկտատոր Պարսից դրան և բիւղանդական կայսեր առաջ: Քանի որ դրացի պետութիւնները չէին արգելում Հայերին հոգևոր գլուխ ընտրել յանձին աղջիս հայրապետի, ով կարող էր խոչնդոսն լինել այսպիսի ընտրութեան: Խոչընդոտը հէնց իրանց իշխանների մէջն էր, որոնք չգիտէին հաշտեցնելու իրանց եսամոլ շահերը պետութեան կարիքների հետ. իսկ ժողովուրդը, իրրև նոյն իշխանների նորտ, ձայն չունէր և անրան անասունի նման հու հապատակ էր իւր մեծաւորներին: Երբ հայրենիքը վտանգի մէջ էր՝ Մամիկոնեանները 8ինցինատի դերն էին կատարում, անցաւ վտանգը, իշխանները դարձեալ իրանց հին երդն էին երգում: Իրերի այս դրութիւնը շատ լաւ հասկացան Արարացիք և մի գեղեցիկ օր կաշմ ոստիկանը նախշուանի եկեղեցում խարէութեամբ հաւաքեց Հայոց հարիւրաւոր մեծամեծներին և 74 թ. այրեց ամենքին. և Հայաստանը զբոկուեց իւր խոռվարար աւագանուց: (Զամչեան խրախնան էլ 194) Եւ այսպէս, թէև նուանեց, բայց նոյա հոգեկան որակը նոյնը մնաց և պետական գաղափարի համար չհասունացան նոքա և

անընդունակ դտնուեցան ըմբռնելու դրացի պետութիւնների մէջ տիրապետող կանոնների, կարգերի և իրաւունքների իմաստը: Քանի քանիսը հայ իշխաններից Պարսից և Բիւղանդացւոց արքունիքի սարդ ու կազմին սիրահար ծառայում էին հաւատարմութեամբ օտարի, բարձր պատիւ և հոչակաւոր անուն ստանում այնտեղ. եղել են և այնպիսիները, որոնք բիւղանդական գահն անդամ բարձրացել են իրանց պետական և զինուորական հանճարի շնորհիւ, բայց ինչ օգուտ նոցանից մայր հայրենիքի համար: Սահակ Պարթևի և ս. Մեօրոպի աշակերտներն էլ սիրահար էին Ասորոց և Յունաց դիտութեան, յանախում էին նոցա դպրոցները. սակայն նոքա այնտեղ ընդմիշտ չէին մնում, վերադառնում էին հայրենիք դիտութեան մեծ պաշարով, իրանց դիտութիւնը նուիրում էին հայրենիքին ու չէին ժառայեցնում իրանց անծնական շահերին, հարստութիւն չէին դիզում, ինչպէս անում են ներկայումս պ. պ. մեր փաստարանները, բժիշկները, ինժեներները և այլն:

Դանք ալժմ Պարսից պատմութեան: Կաւատ Լին յաշորդեց նորա որդին Խոսրով I Անուշ ըռուան (1531-579), որ նշանակում է յօրհնեալ (անմահ)։ Մոյն թագաւորութեան պերիմսկին նուիրում է 18 էջեր, ուր մանրամասնօրէն աւանդում է նորա ներքին և արտաքին գործունէութիւնը: «Մինչև ներկայ ժամանակը այս անունը, ասում է ուսւ դիտնականը, գործ է ածւում արևելքում իցրև նշանակ (СИМВОЛъ) իդէալական թագաւորի: Շատ մեծ եռանդուն թագաւորների նման (օր. Մեծին, Պետրոսի) Խոսրով I, ի պահանջել հարկին հանդիսանում էր խիստ, մինչև անդամ անազորոյն (Մաղդակականների կոտորածների միջոցին). ինքնակալի բռնաւորութիւնից էլ նա զուրկ չէր և արդեան եւրոպացու տեսակէտից Խոսրով I-ը, յալանի բան է, իդէալական կառավարիչ չէ կարող համարուել. սակայն ալսպիսի ահարկու ու զօրեղ անծնաւորութիւնները, որոնք ինքնակալաբար արդարութիւն են կատարում, արևելեան բնակիչներին ուղղակի հմայում են ու հիացնում: Գահ բարձրանալով Խոսրով I. դանձարանը և պետութիւնը առհասարակ քայթալուած դրութեան մէջ գտաւ, մասամբ արտօքին

պատերազմների, բայց աւելի ներքին մաղղակական անկարգութիւնների շնորհիւ Տէրութեան դրամական գործերը կանոնաւորելու նպատակով, Խոսրով I, շարունակելով տակաւին կաւատի օրերում սկսած աշխարհագիրը, հողալին հարկերի այնպիսի սիստեմ սահմանեց, որ համապատասխանում էր հարկատուների ճշմարիտ ոյժերին, ծանր բեռ չէր նոցա համար և միենոյն ժամանակ յաջողութեամբ լրացնում էր պետական զանձարանը. պաշտօնէից ղեղծմունքները և կամայականութիւնը կարուցնելու համար մշակուեց մի շարք ուրոյն (վերաստուգիչ) զըրութիւններ, չպատակների տնտեսական դրութիւնը բարւոքելու, վաճառականութիւնը և արդիւնաբերութիւնը ծաղկեցնելու դիտաւորութեամբ Խոսրով I հոգ տարաւ կառուցանելու կամ նորոգելու բաղմաթիւ շրանցքներ, ամբարտակներ, կամուրջներ և այլն, որոշ տնտեսական օգուտ էր շահում բնակչութիւնը նաև հոյակապ շէնքերի կառուցումից, օրինակ ծիզրոնի ապարանքի շինութիւնից, որ յետոյ մահմետականները համարում էին ամենամեծ շէնք աշխարհում, Դէմոկրատիական, ազատամիտ մաղղակեան շարժումը ուժգին կերպով խախտեց անծնական սեպհականութեան և ընտանիքի դաղափարը, այնպէս որ դեռ կաւատ I միջոցներ ծեռք առաւ ամենայն ինչ հին կարդի բերելու համար. Խոսրով I շարունակեց գործել նոյն պահպանողական ուղղութեամբ:

Պահպանողական ներքին քաղաքականութիւնը, հարկաւ, չէր կարող չնպաստել աւագանու դիրքի ամրանալուն պետութեան մէջ. սակայն Խոսրով I-նը այնպիսի հաստատուն բնաւորութեան տէր էր, որ առանց անարգելու մեծամեծներին՝ դիտէր հնազանդութեան մէջ պահելու նոցա. նոյնպէս վարւում էր նաև հոգևորականութեան հետ. արդէն մաղղակականների զնչումը ցոյց է տալիս, թէ որչափ Խոսրով I դորացրեց զրադաշտականութեան ոյժը. առհասարակ նա աշխատաւմ էր մոգերին իրան նեցուկ շինել, բայց թշլլ չէր տալիս նոցա իրան ղեկափարել և մեծներողամտութեամբ, անգամ սիրելութեամբ էր վերաբերում քրիստոնեայ—նեստորականներին և մօնոֆիղիտներին անխտիր. Հովանաւորութիւն անելով քրիստոնեաներին՝ Խոսրովի հաւատարիմ

մնաց միահեծան իշխանութեան. զայրացած նեստորական կաթողիկոս մատենագիր Մար-Արա 1-նի \*) կամ Մեծի (536—552) վրայ սորա լանդգնութեան առթիւ, Խոսրով տարագրեց նորան և հրամայեց քանդել նեստորական տաճարը Սելեկիայում, բայց նոյն և Խոսրովը նպաստեց քրիստոնեաներին կառուցանելու նոր տաճարներ ու վանքեր։ Նա արգելում էր, 'ի հարկէ, և կրօնական քարողութիւնը քրիստոնէութեան զրադաշտականների մէջ և խիստ պատժեց ասորի մօնօֆիզիտ եախսկոպոս Սիուղէմմէին, որ մկրտել էր Խոսրովի որդոց մէկին (575). սակայն երբ նորա թագաւորութեան կիսում քրիստոնեաները իւրեանց համակրութիւնը լայտնեցին նորա ապստամբ որդուն՝ Անուշեղադին՝ Խոսրով չփոխեց իւր բարեհանութիւնը դէպի այս կուլտուրական տարրը իւր տէրութեան»։

Ցիշեալ քրիստոնեաները, որոնց մասին խօսում է պ. Կրիմսկի, լատկապէս նեստորական ասորիներն էին, որոնց զրականութիւնը լայն ծաւալ ստացաւ. Պարսկաստանում Խոսրով 1-նի հովանաւորութեան ներքյ և հետևող էր Յունաց եկեղեցական փիլիսոփայական զրականութեան. Պ. Կրիմսկի բաւականին մանրամասնօրէն խօսում է Խոսրովին ժամանակից ասորի հեղինակների մասին, որ աւելարդ եմ համարում երկրորդել այսաեղ, քանի որ ծեռքիս տակունիմ ուրոյն գրուածք հետևեալ խօրագրով «Օчерки истории Сирийской литературы Райта \*\*»), որին, եթէ ժամանակս ներէ, կնուիրենք. առանձին մենագրութիւն. իսկ այժմ դառնանք. Խոսրովի արտաքին քաղաքականութեան, որ պատերազմներով լի էր։

Գահ բարձրանալուց զկնի (532 թ.), Խոսրով վերջ դրեց Յունատինիանոսի հետ մղած պատերազմին, որ մղում էր Կաւատը և հաստատեց պատեսական խաղաղութիւն։ Վերջինս, կարծես, գոյութիւն չունէր Պարսկաստանից և Բիւզանդիոնից աւա-

\*) Այլապէս յունական ձեռվ նա կոչւում է Մար-Արաս, ինչպէս գործ է ածւում Հայոց մօտ. (Մ. Խորենացու պատմութեան մէջ)։

\*\*) Ասորոց գրականութիւնը իւր ազդեցութիւնը ունեցաւ Հայոց դպրութեան վրայ և դորանով հետաքրքիր է մեզ համար։

տական կախումն ունեցող երկու արաբական սահմանակից չի-  
դայի և հասանի թագաւորութիւնների համար, որոնք շարու-  
նակում էին իրար հետ կոիւները։ Ուժը տարիներից յետոյ  
(540 թ.) Խոսրով ինքը խանգարեց Վրաւիտենական խաղաղու-  
թիւնը, երկիւղ կրելով Յուստինիանոսի յաղթութիւններից Ափ-  
րիկայում (վանդալներ) և Իսալիայում (Օստղոթներ) և զըր-  
դուած հայերից \*) և Օստղոթների թագաւոր Վիտիգեսի կող-  
մից, որին ջարդել էր Ռավեննայի մօտ Բելիզարիոսը։ Հետեւ լով  
նապուհ Առաջնի օրինակին, Խոսրով մտաւ Ասորիք և այս  
անդամ աւելի յաջողութեամբ, քան թէ նորու հայր Կաւատը  
արաւ 531 թ. Խնապէս երբեմն Շապուհ I III դարում, այնպէս  
էլ այժմ (540 թ. յունիսին) Խոսրով առաւ Անտիոքը, ընդ-  
դիմադրութեան համար այրեց, կողոպտեց քաղաքը, գեղարուես-  
տի իրեկէնները և բնակիչներին տեղափոխեց Պարսկաստան։ Վեր-  
շին դէսքում Խոսրով Ղեկավարում էր այն դիտաւորութեամբ,  
որ կարողանայ Պարսկաստան փոխադրել նոցա արհեստները և  
զիտութիւնը. ուստի իւր մայրաքաղաք Տիգրոնի մօտ նա շի-  
նեց անտիօքացի գաղթականների համար մի առանձին աւան—  
«Խոսրովի Անտիոք»)\*\* կամ Հռոմայեցւոց քաղաք «Հռումիէ»,  
հոգ տարաւ, որ այդ աւանը իւր շէնքերով, տներով ու կար-  
գերով լիշեցնէր հին Անտիոքը, գաղթականներին տուեց առան-  
ձին քրիստոնեայ քաղաքադրուխ. և արդարե, գաղթականները  
պահպանեցին այստեղ, մինչև Սասանական հարստութեան ան-  
կութե, իւրեանց բոլոր բարքերը, սովորութիւնները, զոր. հին  
Անտիօքում սիրած ծիսրշաւանքները։ Պատերազմի Երկրորդ տա-  
րին Խոսրով յաջողութեամբ գործում էր Լաղիստանում (Կովկաս)  
և Միշագետքում. 546 թուին բիւղանդացիք մեծ փրկանք տա-  
լով ազատուեցան պատերազմից. 553 թ. խաղաղութիւնը շա-  
րունակուեց դարձեալ հինդ տարի. սակայն պատերազմական դոր-

\* Գուցէ Յունաց բաժնի Հայերից։

\*\*) Շահարաս Մեծն էլ XVII-դարում Հայերին բռնի քշելով  
Պարսկաստան, կամեցաւ Ասպահանում նոր էջմիածին շինել և նորա  
համար բերել տուեց այնտեղ Ս. Լուսաւորչի Աջը և Ս. էջմիածնի  
քարերը։ (Տես. պատ. Առաքել Դաւթիթեցու).  
Մ. Շ.

ՃՈՂՈՎԾԻՒՆՆԵՐԻ շՐՅԱՆԻց հանուած էր սահմանական գիծը Սևաւ ծովի եղերթում – Լաղիսասանը (553 թ. Պարսիկները մինչեւ անդամ պարտութիւն կրեցին Փօտի քաղաքի մօտ Ռիօն գետին կից)։ պատերազմը չդադարեց արևմտեան անապատի ձայրում չիրայի և Հասսանի Արարացւոց մէջ և մի հակատամարտում ընկաւ ամենի և դադանաբարոյ Միւլնղրո. III-դր, որ մարդկային գոհներ էր մատուցանում Օղա դիցուհուն, ինչպէս իւր տեղում լիշեցինք: (Արարացւոց ներքին կոփւները մի կողմ թողնելով, մէնք դառնանք Պարսից և բիւղանդացւոց լարաբերութիւններին):

Կիսկատար խաղաղութիւնը Պարսկաստանի և Բիւղանդիոնի մէջ հասաւատուած 562 թ. կնքուեց 50 տարով: Հաշտութեան պայմանների մէջ մտցրած էր մի կէտ, որի զօրութեամբ Բիւղանդացիք երաշխաւառում էին մի որոշ գումարի վճարում՝ կովկասեան բերդերի պահպանութեան համար: Խոսրով I շինեց Դերբենդի երևելի պարիսպները մինչև Կաղբից ծովը. բայց և ծովերի ափերը մնացին Յունաց ծեռքում:

Իրանի արևելեան սահմաններում, Միշին Ասիայում, հաշտութեան միջոցին 546—562 տեղի ունեցաւ մեծ փոփոխութիւն: Հիւսիսային տափարակներից Միշին Ասիա միշամուկս եղան թիւրքեր (Տյօրκի, որոնց անունը միայն այժմ է լայտնի դառնում արևմտեան աշխարհում). դաշն կապելով Խոսրովի հետ, նոքա կործանեցին Հեփթաղների թագաւորութիւնը. թիւրքերի խաքանը (թագաւոր) Սիլզիբուլըստ Յունաց, իսկ պարսիկ-արարացւոց Սինջիբու, առաւ իրան Հեփթաղների թագաւորութեան այն մասն, որ դտնում է Օքսուսի կամ Ամու-Դարեայի տղ ափերում (այսինքն է այն, որ այժմ մէնք կոչում ենք Թուրքեստան), իսկ Խոսրով գրաւեց Հեփթաղների երկիրը Օքսուսի ծախս սփում (560 թ.) այսպէս Բակարիա, որ այնքան չարիք պատճառեց Իրանին և կորստեան մատնեց Պերողին, այժմ սասանական թագաւորութեան նահանգ գարծաւ: Օքսուս այնուհետև անջրպետեց Իրանը Տուրանից: Նուտով սկսան դարեւոր պատերազմներ Խոսրովի իսկ օրերում Իրանի և Տուրանի մէջ և յետոյ հարաւային Արաբիայում: Այնաեղ, եմնում, հարաւ-արաբական խիմեարի թագաւորութիւնը II դ.

դարում Քրիստոսի բռնելով հին Սարելական թաղաւորութեան տեղը, VI դարում ենթարկուեց Եթովքիսյի քաղաքական խիստ ազգեցութեան։ Զորրորդ դարու կիսում Եթովքիս եկան Բիւղանդիոնից քրիստոնեայ քարողիներ և շուտով Եթովքացիք ազգովին մկրտուելով՝ ուրիշ կողմեր էլ տարածեցին քրիստոնէութիւնը օր. Նաշրան, և Աղէն։ Իւր քաղաքական համակրանքներով քրիստոնեայ Եթովքիս բնականաբար մտաւ Արևելեան Հռովմայեցւոց շահերի շրջանը։ Հայրենասէր եմենցի արարացիները չէին կարող ծգտել դէպի քրիստոնէութիւնը, ինչպէս նոցա հայրենակից նաշրանցիք և աղենցիք և հաւատարիմ էին իրանց հեթանոսական կրօնին և կամ ընդունում էին հրէական քարոզութիւն, որ մանում էր Արարիա հիւսիսից, կորցնելով այնաեղ ազգայնութեան դրոշմը և փօխուելով միաստուածութեան։ Հինգերորդ դարում ազատուած հարաւային Արարիայի և Եթովքիայի մէջ խաղաղութիւն էր տիրում, բայց երբ VI դարու սկզբում պատերազմ ծագեց Պարսկաստանի և Արևելեան Հռովմայեցւոց կայսրութեան մէջ, Եթովքացիք պահանջ զգացին յարձակուել հարաւային Արարիայի վերայ։ Ալդ դիտաւոթեան՝ իւրեանց խնդիրքը նեգուսին, նպաստեցին բիւղանդական կայսերը Յուստինոս I (513—527) և Յուստինիանոս I (527—565), որոնք օդտակար էին համարում իրանց համար, որ Եմենում լինի Բիւղանդիոնին հաւատարիմ մի թագաւորութիւն, որ հարաւից կարողանար դիմադրել Բիւղանդացւոց համար ատելի արարական Հիրայի պետութեան։ Միջամտութեան առիթը շուտով ներկայացաւ Եթովքացւոց 520 թ., երբ հրէական կուսակցութիւնը Եմենում դահրարձրացրեց Զունովասին։ Նոր տօրքա, այսպէս էին կոչւում խիմեառի թագաւորները, քրիստոնեաների անհաշտ թշնամին լինելով, 20,000 քրիստոնեայ կոտորեց և որովհետեւ գիտէր, որ Եթովքացիք անպատիժ չեն։ Թողնի նորա վարմունքը, բանակցութիւններ սկսեց Բիւղանդիոնի հակառակորդ Պարսկաստանի հետ, Հիրայի թագաւոր Միւնզը III դի միջնորդութեամբ։ 525 թ. Եթովքացիք Յունաց նաւերով ցամաք իշան Եմենում, ուր քրիստոնեաները միացան նոցա հետ, բռնեցին Զունովասին և սպանեցին. Եմենում

հաստատուեց եթովրական փոխարքայ: Այն ժամանակ Պարսկաստանում թագաւորում էր Կաւաստ I: Մինչև նորա թագաւորութեան վերջը Արարիան մնաց Եթովրիայի տիրապետութեան տակ, նաև Խոսրովի օրերում մօտաւորապէս լիսուն տարի: Եթովրացւոց արշաւանքը դէպի Մեկկա անհետեանք անցաւ 570 թէ Խիմեառի հարսատութեան վերջին իշխան՝ դիւցազն Սէլֆ, իղուր մաքառելով Եթովրացւոց դէմ, գնաց, վերջապէս, Պարսկաստան օդնութիւն խնդրելու. Խոսրովը զօրք ուղարկեց Արարիա Բա՛ռիդի զօրավարութեամբ և հաստատեց գահի վրայ Սէլֆին: Բայց երբ Սէլֆին սպանեցին, նորա խստութեան համար, այն ժամանակ Բեհասիդ վերջնականապէս Եմենը միացրեց Իրանին և ինքն շահի փոխարքայ դարձաւ: Նորա սերունդը մնաց Էմենում մինչև Մոհամեդի ժամանակը:

Եթովրական քրիստոնեայ թագաւորութեան կործանումը Եմենում զայրացրեց Բիւզանդացւոց, որոնց վրայ թագաւորում է անհանճար Յուստինոս II-ը (565-578). Կայսրն էլ իւր կողմից բարկացրեց պարսիկներին, յարաբերութեան մէջ մտնելով թիւրքերի խաքանի հետ, և ընդհատելով պայմանաւորեալ զումարի վճարումը: Խաքանը թշնամացաւ իրանին. իսկ երբ Պարսկաստանի դէմ ապստամբութիւն ծագեց հայաստանում կրակապաշտութեան մեհեանի շինութեան պատճառով\*) և երբ նոյնպիսի խոռովութիւններ սկսան Վրաստանում, Յուստինոս II իւր հովանաւորութեան ներքոյ առաւ երկու երկիրներն էլ և ահա նորից պատերազմ բորբոքուեց իրանի և Բիւզանդական կայսրութեան մէջ (571 թ.): Արիւնահեղ պատերազմը տևեց քսան տարի Խոսրովի մտհից լետոյ և պատերազմի ասպարէզը փոխւում էր մերթ Միջադետքուր պարսիկները առին Դարան, մերթ Ասորիք և Կապաղոկիայի խորքերը: Վաստակած հակառակորդները արդէն պատրաստում էին հաշտութիւն խօսելու, երբ Խոսրովը մեռաւ 579 թ. և նորան լաշորդեց Որմիզդ IV: Չորս ամիս դորանից առաջ Բիւզանդական գահը բարձրացաւ Տիբերիոս I (578-582):

\*) Վերը արդէն յիշեցինք, որ ապստամբութեան գլուխ անցաւ Վարդան II Մամիկոնեանը: Մ. Շ.

## ՈՐՄԻՉԴՐ. IV ԵՒ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆ ՎԱՀՐԱՄ ԶՈՒԲԻՆԻ

Որմիղդ, IV (579-590), Խոսրովի լաշորդը այնքան գոռող էր, որ աւելորդ համարեց իւր դահակալութեան մասին հաղորդել բուզանդական զրան, այն ինչ այդպիսի զեկուցում սասանեանք և բիւզանդացիք միմեանց միշտ անում էին, անզամ պատերազմական դործողութիւնների միջոցին: Նոյնպիսի գոռողութեամբ նա վարւում էր պարսկական աշխարհական աւագանու և հոգեորականութեան հետ, որոնց վրայ յենւում էր նորա հայրը: Զօրքի մէջ նա հոդ էր տանում հասարակ զինուորների մասին, բայց վատ էր խնամում ծիաւոր ասպիտներին. երբ վէճեր էին ծագում հասարակ ժողովրդի և ազնուսկանների մէջ, նա դատաստանում առաջնի կողմն էր բռնում և առհասարակ Որմիղդ միշտ հասարակութեան ստորին դասակարգին էր հովանաւորում: Գալով մողերին, երբ գործա խնդրեցին Որմիղդից սահմանափակել, վերջապէս, քրիստոնեանների իրաւունքները, նա պատասխանեց, թէ պետութիւնը հաստատուն չիլինի, եթէ քրիստոնեալ հպատակները և ոչ տիրապետող կրօններիներկայացուցիչները չարացած կլինին. արքայական դահը կանգնումէ ոչ միայն երկու առշեկի, այլ և երկու լետնի լենարանների վրայ, փոխանակ յարձակուելու քրիստոնեանների և օտարահաւատների վրայ, աշխատեցէք գերազանցել նոցա ձեր առաքինութիւններով, թո՛ղ այդ ճանապարհով հասկանան նոքա ձեր կրօնի վեհութիւնը: Ինչպէս տեսնում ենք, գրում է պ. Կրիմսկի, Որմիղդ IV-ը լիշեցնում էր Յազկերտ I-ին (399-420) և նա նոյն վիճակին ենթարկուեց, այսինքն, երբ զօրտվար Վահրամ Զուրինը քանիցս յաղթելով թիւրքերի խաքանին, միանդամ ինքը պարտութիւն կրեց բիւզանդացիններից Կովկասից դէպի հարաւ, Որմիղդ անարդանքով զրկեց նորան զօրտվարութիւնից: Զայրացած Վահրամ Զուրինը ապստամբութեամբ պատասխանեց դորան: Դրան աւագանին օգտուելով առիթից՝ և տապալելով Որմիղդ IV-ին, \*) գտն բարձրացրեց նորա որդի Խոսրով II դ. Ապրուէզին (590-628):

\*) Սեբէոսը փոքր ինչ տարբեր կերպով է բացատրում Որմզդի մահուան պատճառը: Յայնժամ արարեալ Վահրամայն այնորիկ

Այս Խոսրով Ա-դը, համոզուելով՝ որ չէ կարող զլուխ  
դալ Վահրամի հեա, որ ինքն էլ կամեցաւ թագաւորել և նո-  
րա դէմ ուղարկած զօրքն էլ անցել էր նորա կողմը, փախաւ  
թիւղանդացւոց արևելեան սահմանները և սահմանակից Կիրկե-  
սիա քաղաքից աղաչանաց թուղթ գրեց Մօրիկ կայսեր (582-  
602): Քաջարի Մօրիկը, նախրնթաց կայսեր Տիրերիոս I-նի  
փեսան, իրան համար շատ հաճելի համարեց օրինաւոր ժառան-  
գին բաղմեցնել արքայական գահը և թագաւորի «հայր» կո-  
չուել: Այդ միջոցին Վահրամ Չուրինը թագաւորելով Տիղբոնում,  
իւր անուամբ արդէն դրամ էր կարել. սակայն նա մոռացել էր  
այն հանգամանքը, որ աւագանին և ժողովուրդը Արտաշրի սե-  
րունդից զատ ուրիշ թագաւոր երեք չէր ճանաչում. ուստի  
երբ Մօրիկի զօրքերը 591 թ. Խոսրովի հետ մտան Միջագետք  
և սկսան մինը միւսի լեաւեցնուածել պարսկական քաղաքները,  
բնակիչները և բուն իսկ Վահրամի զօրքն էլ Մծրնի մօտ յօժա-  
րակամ միացան Խոսրովին, թիւղանդացիք լաղթանակով մտցրին  
Ասպրուէզին Տիղբոն մայրաքաղաք. Վահրամ Չուրինը \*) փա-  
խաւ Թիւրքեստան և այնտեղ սպանուեց:

---

պատերազմն ընդ մեծի արքային Մազքթաց (իմանաւանին թիւր-  
քաց)… յայնկոյս գետոյ մեծի (Օքուսի), եհար զբազմութիւն  
զաւրացն, և եսպան զթագաւորն 'ի պատերազմի, և ըմբոնեալ  
յափշտակեաց զամենայն զգանձ թագաւորութեանն այնորիկ: Ա-  
ւարի մի փոքր մասն Վահրամ ուղարկում է Որմզդին, մեծագոյնը  
բաժանում է զօրքի մէջ, Դժգոն Որմիզդ իւր համահարզներին և  
փուշտիպաններին արձակելով Վահրամի բանակը, պահանջում է  
բոլոր գանձը: Զօրքը սպանում է թագաւորի հաւատարիմերին և  
Վահրամին թագաւոր է հոչակում: Մի այլ տեղում Սեբէսուը աւան-  
դում է, թէ՛ Եւ ժողովեցան ամենայն նախարարք և զաւրագութիք  
և զաւրք ի գահին արքունի... և մտեալ 'ի սենեակ արքայի կա-  
լան զթագաւորն Որմիզդ, և անդէն վաղվաղակի փորեցին զաշն  
նորա և ապա սպանին: Եւ նստուցին զորդի նորա թագաւոր, ի  
վերայ աշխարհին Պարսից. (տես էջ. 30, 31, 32. Սեբ. Ա. Բուրդ  
1879): Մ. Շ.

\*) Սեբէսու աւանդում է, թէ Վահրամը իմանալով, որ Հայերը  
Մուշեղ Մամիկոնեանի զօրավարութեամբ պատրաստ են աջակցելու  
Խոսրովի և Մօրիկի զօրքերին, հետեւալ ուշագրաւ հրովարտակն է

Բարեկամական դաշնադրութեան զօրութեամբ, Խոսրով Անի ժամանակ նուաճուած Դարա, Մարտիրոսաց քաղաքը և Հայաստանի մերձակայ գաւառները անցան Բիւզանդացւոց. բայց

գրում Մուշեղին. «Ես այսպէս կարծէի՞ եթէ ես յորժամ ընդ թշնամիս ձեր մարտնչիմ, և դուք 'ի կողմանէ այտի եկեալ՝ ինձ աւգնական լինեցիք. զի ես և դուք, միաբանութեամբ բարձուք 'ի միջոյ զտիեղերական պատուհասն՝ զտունն Սասանայ: Իսկ դուք աւաղիկ ժողովեալ գայք 'ի վերայ իմ պատերազմաւ յօդնութիւն դմա (Խոսրովու). այլ ես ոչ երկեայց 'ի ժողովելոց երիցանցդ Հռովմայեցւոցդ՝ որ եկեալ են 'ի վերայ իմ: Բայց դուք Հայք, որ տարաժամ ցուցանէք զտիրասիրութիւն, ոչ ապաքէն տունդ Սասանական երարձ գերկիրդ ձեր և զտէրութիւն, եւ կամ ընդէր բնաւ ապստամբեցին հարքն ձեր և զնացին 'ի ծառայութենէնցա, մինչև ցայսաւր պատերազմեալ 'ի վերայ տշխարհին ձերոյ: Եւ արդ՝ դիմեալ գայ 'ի վերայ կորուսանել զայնչափ վաստակս ձեր. զի թէ Խոսրով յաղթեալ էր երկորին դոքա միաբանեալ բարձցեն զձեզ 'ի միջոյ: Բայց զի հաճոյ թուեցի ձեզ 'ի բաց կալ 'ի դոցանէ և միաբանել ընդ իս, և ձեռն տալ ինձ յաւգնականութիւն, եւ թէ ես յաղթեցից՝ երդուեալ 'ի մեծ աստուածն Արամազդ, և յԱրեգակն տէր և 'ի լուսին, 'ի Հուր և ի ջուր, 'ի Միհր՝ և յամենայն աստուածս՝ իթէ ձեզ տուեալ լիցի իմ զշայոց թագաւորութիւն: Զիր և դուք կամիք, արասզիք ձեզ թագաւոր: Եւ թողում ձեզ զամենայն երկիրն Հայոց մինչև ցկապկոն և ցդուռն Աղուանից և յԱսորոց կողմանէ՝ զԱրուսաստան և զնոր Ծիրական մինչև ցսահմանս Տաճկաց, զի առ նախնեաւքն իսկ ձեզ լեալ է. և ընդ արևմուտս մինչև ցկեսարիա կապադովկացւոց: Եւ ես մի իշխեցից քան զԱրասպ անցանել յայնկոյս, և գանձն Արեաց թագաւորութեանս բաւական համարեա լիցի ինձ և ձեզ: Եւ այնչափ ձեզ շատ լիցի՝ մինչև ձեր թագաւորութիւնդ հաստատեսցիս: Վահրամի յիշեալ առաջարկութիւնները, եթէ միայն դոքա Սերէսոսի հնարածը չեն, շատ հրապուրիչ էին. սակայն Մուշեղն էլ այնքան միամիտ չէր. նա շատ լաւ ճանաչում էր թէ պարսիկների դարևոր խորամանկութիւնը, թէ Բիւզանդացւոց ոյժը և թէ հայ իշխանների թեթևամտութիւնը. ուստի նա շատերից ծածկեց հրովարտակի բովանդակութիւնը, որ նոր չարեաց դուռը չըբացի Հայաստանի համար և քաջութեամբ ու հաւատարմութեամբ ծառայեց Խոսրովին: Վահրամի երկրորդ գրութեան Մուշեղ խուսափական պատասխան տուեց: (Սեր. էջ. 37, 38, 39).

առհասարակ իրանի և Բիւղանդական կայսրութեան մէջ նորոգուեցան նոյն սահմանները, ինչ որ էին այս քսան ամեայ պատերազմներից առաջ. ընդ սմին մինչև անդամ Մծբին անրոցը, որի հանդէպ Բիւղանդացիք պիտի ունենային իւրեանց ամրոց Դարսան, Մօրիկը թողեց Պարսիկներին։

Վերև լիշուած «Հայաստանի մերժակայ գաւառներն», ըստ Սեբէոսի, դոքա էին՝ «Ետ նոցա (Յունաց) զԱրուաստան զամենայն մինչև զՄծբին և զերկիրն Հայոց՝ որ ընդ իւրովիշխանութեամբ էր, զտուն Տանուտերական մինչև ցգետն Հուրազդան, և զդաւառն Կոտէից մինչև ցաւանն Գառնի և ցեղը ձու վուն Բղնունեաց և զԱռեստաւան և զԳոգովիտ գաւառ մինչև ցՀացիւն և ցՄակու», (տե՛ս էջ. 45).

«Խոսրով II Պերուեղ (Ապրուէզ) 590-628 հաստատուելով գահի վրայ, հինգ տարի շարունակ պիտի ներքին պատերազմներ մղէր իւր քեռի Վստամի դէմ, որ իրան թագաւոր հոչակեց Մարաստանում, իւր կողմը ձգելով Վահրամ Չուրինի զօրքերի մնացորդը։ Նոր վերջացած քսանամեայ պատերազմները Խոսրով I և Որմիզդ IV-ի Բիւղանդացւոց հետ և ներքին կոիւները չափազանց քայքայել էին Իրանի դրութիւնը, սակայն Խոսրով II, չնայելով այդ հանդամանքներին, իրան պահում էր շատ վեհապանծ և փառահեղ, 'ի բնէ թոյլ և երկչոտ, նա սնապարծ էր և սիրում էր փարթամութիւն։ Նորա ապարանքը, հանդիսաւոր ելքը և խնճոյքները երևելի էին իրանց շռավլութեամբ և մինչև անդամ գովարանւում էին յետին ժամանակի պարսկական բանաստեղծներից, այն ինչ ժողովուրդը հեծում էր ծանր հարկերի տակ և նորա ազահութիւնից։ Անլազող էր նաև Խոսրով II-ի ներքին քաղաքականութիւնը քրիստոնեաների վերաբերութեամբ։ Ճշմարիտ է, Խոսրով առհասարակ լաւ էր վարւում քրիստոնեաների հետ, որովհետև քրիստոնեայ Բիւղանդացիք նըստացրին նորան գահի վրայ և նոցանից հազար մարդ մնացին Պարսկաստանում իրրև արքայի թիկնապահներ։ Խոսրովի վերայ մեծ ազդեցութիւն ունէին նոյնպէս նորա սիրեցեալ կինը բարեպաշտ Շիրին թագուհին և պալատական բժիշկ քրիստոնեայ Գարրիկը։ Վերջնիս դրդմամբ Խոսրովը անխոհեմութեամբ խառ-

նուեց քրիստոնեաների գործերի մէջ Գարբիկլը մօնոֆիղիա էր. իսկ մօնոֆիղիաները-կատաղի թշնամիք էին նեստորականների և քրիստոնեայ բնակչութեան մեծաղջն մասն Պարսկաստանում նեստորականներ էին. Առաջ, քանի որ կենդանի էր Խոսրով Ա-ին սիրելի նեստորական կաթողիկոս և եկեղեցական պատմազիր Սարբ-Իշո (604), նեստորականները միշա ունէին բարձր հովանաւոր պալատում և հեղինակօրէն դատապարտում էին իւրեանց ժողովներում Հաննանիտների աղանդը, որ նոր էր ծագել մեծ աղմուկով և մօտ էր մօնոֆիղիատականութեան. բայց երբ մեռաւ Սարբ-Իշօն և աղդեցութիւն ծեռք բերեց մօնոֆիղիա Գարբիկլ բժիշկը, նեստորականները արդէն հալածանքների ենթարկուեցան, հայրապետական գահի համար ընտրուեցաւ ոչ նոցա, այլ հաննանիտեան թեկնածուն: (Հաննանա՝ Մծրինի դպրոցի պեար տակաւին Որմիզդ IV. դի օրերում հրատարակեց նոր կանոնադրութիւն դպրոցի համար և ընդունեց Յ. Ոսկե-բերանի քանի մի ուղղափառ հայեացքները, որ հակառակ էին նեստորականների մէջ հեղինակութիւն վայելող Թէոդորոս Մօփ-սուեստացու վարդապետութեանը. այսու Հաննանա մօտեցաւ մօնոֆիղիատականութեան): Բայց երբ երեք տարուց յետոյ վախ-ճանուեց Գրիգոր Կաշկարցի կաթողիկոսը չըկարողանալով ար-դարացնել մօնոֆիղիատականների ակնկալութիւնները, հայրապետական գահը թափուր մնաց քանակմէկ տարի մինչև Խոսրովի մահը. առհասարակ հալածուած նեստորականների առաջ առաւելու-թիւնը տրում էր մօնոֆիղիատականներին, այնպէս որ առաջինները ատելով ատում էին Խոսրով Ա-իին և, ինչպէս կտեսնենք ստորև, նոցանից մէկը չերմ մասնակցութիւն ունեցաւ դրան աւագանու գաւաղրութեան մէջ ընդդէմ թագաւորի: Իսկ այդ դաւադրու-թեան շարժառիթ էր Խոսրով Ա Ապրուէզի վերսկած և անլա-չող տեսող պատերազմը Բիւզանդացւոց հետ:

Նոր պատերազմի սկիզբը Բիւզանդացւոց հետ շատ փառաւոր էր Պարսիկների համար: Պատերազմի պատճառն այն հանդամանքն էր, որ Խոսրովի անուանեալ «հայրն» Մօրիկ կայսրը 602 թ. տապալուելով սպանուեց կոպիտ արքեցող և

զեղիս Փոկասի \*) ծեռքով. Մօրիկի որդու Թէոդոսի և Եղեմիու վոխարքայ Ներսիսի գրդամբ (Փոկաս այրել էր Եղեմիան). Խոսրով իրան վրէժինդիր յայտարարեց իւր ապանուած «հօր». ապատերազմը սկսուեց 604 թ.: Բիւզանդական կայսրութիւնը շատ թուլացած էր չնորհիւ Փոկասի անպիտան կառավարութեան և Ավարների արշաւանքի և դորանով հարկ է բացարեկ այն հանգամանքը, որ լրնթացս առաջին քսան տարուայ Պարսից զօրքերը աւարածութեամբ ու անպատիւ հասան կայսրութեան հեռաւոր ասիսկան կարուածները, անցան Հայաստանից ամբողջ Փոքր Ասիան մինչև Քաղկեդոն, որ կանդնած էր Կ. Պօլսի հանդէպ (609, 619-620) և այլն. Խոսրով II Ապրուէզը մասնակցում էր միայն Դարայի (604) նուանմանը, իսկ միւս քաջադործութիւնները կատարում էին նորա զօրավարները:

Թէ Պարսկաստանն էլ թոյլ էր, չնայած տարած լաղթութիւններին, պարզ է, ըստ երեցիթին, մի աննշան հանգամանքից, որ տեղի ունեցաւ պատերազմի միջոցին Արեւելեան կայսրութեան հակառակ ծայրում, լատկապէս այդ երեսում է Զուկարի ճակատամարտից բէժուինների դէմ. ճակատամարտս կապուած է արարական աւատական Հիրայի թագաւոր նօման V-դ (580-602) վատ վարչութեան հետ: Թագաւորը իւր անհնագանդութեամբ և կամայականութեամբ իւր դէմ գրգռեց Խոսրով II Ապրուէզին: Հիրայի աւատական թագաւորների կամայականութիւնը հածելի չէր Պարսից նախսկին միապետներին էլ, սակայն նոքա հաշտուում էին դորա հետ, հասկանալով թէ այդ աւատական սահմանային իշխանութիւնը Իրանի համար մի պատուար էր բէդուին (արարացիների) հրասակների արշաւանքների հանդէպ Արարիայի անապատից: Քաջ ըմբռնելով այդ՝ Խոսրովի նախսորդ, Որմիզդ IV Հիրայի գահի վրայ բարձրացրեց նօման V-ին 580 թ: Հիրայում դորանից առաջ թագաւորի բացակայութեան շնորհիւ, երկպառակութիւններ էին ծագել և Որմիզդ

\*) Ֆրանսիացի ակադեմիկոս Շլիմբերժէ Փոկասին հայ է համարում. տես նորաստուար գրուածքը Բիւզանդական կայսրութիւնը IX դարում: Մ. Շ.

IV-դ շահը իւր մօտ կանչել տուեց բոլոր թեկնածու արքայագուններին, նոցա միջից ընտրելու համար լարմարագոյն կանդիդատին և հաստատելու հիրայի գահի վրայ: Նօման արքայաղնը նարպիկութեամբ շահեց դրան խորհրդականների սիրտը և սոցա թւում Աղիա իրն-Զէլդին, շահի քարտուղարին ու թարգմանչին, որ քրիստոնեայ-արաբացի էր (և հռչակաւոր բանաստեղծ էր). նա բաւականին մեծ գումար էլ տուեց իրան շահին և աւագանուն և վերջնականապէս իւր կողմը ձգեց նոցա այն իսկ օրը, երբ հերթով տասներեք եղբայրները ներկայանալով շահին, լսում էին նորանից միւնոյն հարցը. կարող ես արգեօթափառական արաբացիների առաջն առնել և չթողնել Իրան մտնելու. մի հարց, որով ձև ակերպւում էր Իրանի սահմաններում արաբական հիրայի թագաւորութեան գլխաւոր պարտականութիւնը և նորու raison d'être-ը: Արքայաղուններից իւրաքանչիւրը պատասխանում էր, կարող եմ, միայն նօմանի հետ զլուխ գալ դժուարանում եմ. իսկ նօման միւնոյն հարցին պարզապէս պատասխանեց Որմիզդին. կարող եմ. ապա, եղբայրներիդ կզսպե՞ս, շարունակում էր շահը փորձել և ստացաւ. արհամարհական պատասխան՝ եթէ բոլոր արաբացիներին կարող եմ զսպել, եղբայրներիս աւելի հեշտ է: Ան ժամանակ շահը հաստատութեան հրովարտակը տուեց նորան և նօման Վբազմեց հիրայի գահի վրայ, և մասց 22 տարի (680-602) և կարողացաւ բաւականին ծառայութիւններ մատուցանել Իրանին և թափառականների արշաւանքների առաջ առաւ. նա օգնեց Խոսրովին Վահրամ Զուրինի ապստամբութեան միջոցին: Սակայն, ըստ սովորութեան հիրացիների, նա արշաւանքներ էր գործում հասսանեան Արաբացիների վրայ, որոնք աւատական կախումն ունեին Բիւզանդական կայսրութիւնից չնայելով Խոսրովի և Մորիկ կայսեր մէջ կնքուած խաղաղութեան: Նօմանի անհնազանդութիւնը այս և այլ դէպքերում զայրացնում էր Խոսրովին, որի դեսպաններին նա սպանում էր, օր. վերցիշեալ Աղի-իրն-Զէլդին: հիրայի թագաւորութեան վերջ դնելու նախագիծը հասունանում էր և առիթը ներկայացաւ: Խոսրով II Ապրուէզը ցանկացաւ իւր կանանցում տեսնել նօման Վ-ի

«աչեղ» դստեր, բայց Հիրայի գոռող թագաւորը, իրքև ճշմարիտ արարացի, որ անվայիլ էր համարում աղջկիր օտարութիւն հեռացնել, պատասխան ուղարկեց Տիգրոն շահին, թէ գուցէ րուն իսկ Պարսկաստանում էլ նա կրդոնի իւր համար բաւարար քանակութեամբ աչեղ կովեր: Այդ պատասխանը լըրեց ինքնասէր և ամբարտաւան շահի համբերութեան բաժակը և նա խորամանկութեամբ հրաւիրելով նօման V իւր մօտ Տիգրոն, քանտարկեց նորան ու սպանել տուեց, իսկ Հիրայի աւատական իշխանութիւնը Պարսկաստանի հասարակ նահանգ դարձրեց: Երկու տարուց յետոյ (604) սկսաւ վերշին ծանրագոյն պատերազմը Պարսկաստանի Բիւղանդիոնի հետ և իսկոյն երկեցաւ այն մեծ սխալը, որ թոյլ տուեց իրան Խոսրով II Ապրուէզը, վերջ դնելով Հիրայի ինքնուրոյն թագաւորութեան: Դորս հարաւային դրացիք թափառական բէդուիններն էին, որոնք օգուտ քաղելով Հիրայի հարստութեան դադարումից, արշաւեցին այնտեղ և բանակ ծգեցին Զու-կարի մօտ ոչ հեռու Եփրատից: Նոցա դէմ ու զարկուած Պարսից զօրքը չարաչար շարդուեց Զուկարի հակատամարտում և այսպէս այն իսկ միջոցին, երբ հիւմասում, Փոքր Ասիայում պարսիկները փառաւորապէս յաղթելով կայսեր զօրքերը, մօտենում էին Կ. Պօլսին, այսուեղ, հարաւաւում Զու-կարի պատերազմը շտա աննպաստ կարծիք տուեց Արաբացիներին Պարսից զօրութեան մասին և յետագայ տարիներու մահմելականները աներկիւլ արշաւեցին դէպի իրան:

Բայց չնայելով արարական անապատի մօտ սեղի ունեցած դժբախտ պարագաներին — արևմուտքում Բիւղանդիոնի դէմ մղած պատերազմներում 15-20 տարի շարունակ Զու-կարի պարտութիւնից յետոյ, յաջողութիւնը Պարսից կողմն էր, թէև երկչու Փոկասին տապալել էլ քաջարի Հերակլ կայսրը. (610-641): Մի տարի նորա գահ բարձրանալուց առաջ պարսիկները նուաճեցին Եղիսեան (609), ապա անցան Ասորիքը մինչև Անտիոք. նոր արշաւանքի միջոցին նոքա տիրեցին Դամասկոս քաղաքին (613), ուր առաջ նորա երբէք չէին եղած և դամասկեան Ասորիքում հաստատեցին իրանց կառավարութիւնը. յետոյ աւերեցին Պաղեստինէն և 614 թ. լունիսին մտան երրու-

սաղէմ. Տիրոջ կենդանարար սուրբ խաչը գերի վարեցին Տիգրան: Նուաճելով Եղիպատոսը, պահեցին այն իրանց իշխանութեան ներքոյ մինչև 618 թ: Հիւսիսում Պարսիկները բանակով կանդնեցին Քաղկեդոնում և Պօլսի հանդէալ (619-620): Հերակլ կայսրը և Կ. Պօլսի աւագանին իղուր էին աշխատում ամօթալի փորձերով հաշտութեան հրաւիրել թշնամուն և կայսրը լուսահատութեամբ մտակիր էր փախչել Ափրիկէ և տեղափոխել մայրաքաղաքը Կարթագինէ: միւս կողմից նորից Ավարցիք յարձակուեցան Բիւզանդիոնի վրայ: Բայց ահա գործի մէջ մտաւ եռանդուն Սերդիոս հայրապետը և Հերակլը՝ ի բնէ տատանուող, բայց ընդունակ ուժդիմն ոգեւորութեան, կենդանացաւ նորա աղգեցութեան ներքոյ: Սերդիոսը գիտաց ներգործելու Հերակլի հոգերասնութեան ամենաթշըլ կողմի վրայ—կրօնական միստիքականութեան և Հերակլ վրէմխնդիր լինել Քրիստոսի համար, Որին հեթանոսները յանդզնեցին անհանդիստ առնել մինչև անդամ դադաղի մէջ: Ավարների յարձակողական շարժման առաջն առին խաղաղութեան բանակցութիւններով (620) և այս կողմից վտանգից ազատուելով, Հերակլ մեծ զօրագնդեր հաւաքեց, մարդեց և ինքը նոյցա գլուխն անցաւ (Ապրիլին 622 թ). պատերազմական ծախսերի համար եկեղեցական դանձերն էլ դորժ դրուեցան: Հերակլ ծօվով հասաւ Խսոսի ծովածոցը, այնտեղից մտաւ Կապպաղովիկիա և մի շարք պարտութիւններին մատնեց պարսիկներին. այս առաջին արշաւանքից յետոյ, որ տասն ամիս տևեց, պարսիկները նորից սկսան յարգանք տաձել դէպի Բիւզանդացիները: Խւր զիսաւոր արշաւանքը. կայսրը սկսաւ 623 թ.: Նա դարձեալ անցաւ Պոնտոսի երկիրներով, մտաւ Հայաստանի խորքերը և քանդեց Քանձակում (Ուրմիոյ ծովակի մօտ—Դաւրէժ) կրակապաշտների հոչակաւոր բազինը \*)՝ ի վրէժինդրութիւն երօւսաղեմի պղծելցն Պարսից կողմից: Հետեւեալ տարիների ընթացքում նա մնաց Ասիայում նորանոր յաղթութիւներ կատարելով, և մենք տեսնում ենք, թէ ինչպէս նա անահնկալ կերպով երևում է զանազան աեղերում, մերթ

\*) Կործանէ և զբագինս Հրապինս մեծի՝ որում վշնասպն կոչէին. Սերէոս. էջ 92. Մ. Շ.

Կովկասում, մերթ Փոքր Ասիայից դէպի արևելք, մերթ Միջագետ-  
քում անդադար լաղթութիւններ անելով: Վերջապէս 626թ. Խոս-  
րով Ա. Ապրուէզ վճռեց դիմել խիստ միջոցներին: Նա ուղարկեց իւր  
լաւագյն զօրավար Շեարբարազին \*) մեծ զօրքով Քաղկեդոն, հրա-  
մայելով այնտեղից գնալ կ. Պօլսի վրայ. իսկ ինքը զրգուեց Ա-  
վարներին, Բուլղարներին և Սլաւոնացիներին Բիւզանդիոնի դէմ:  
Սկսաւ կ. Պօլսի պաշարումք: Ավարների իանը մերձենալով մայ-  
րաբաղաքին, յանդդնու թեամբ պահանջեց քաղաքը. միւս կող-  
մից, շրանցքի լետում կանգնած էին պարսիկները. իսկ ինքն  
կայսրը յայտնի չէր թէ Ասիայի ո՞ր խորքերումն էր գտնւում:  
Բիւզանդացւոց առծեռն պատրաստ ոյժերը այն ժամանակ բա-  
ժանուած էին երեք զօրագնդերի. մէկը պաշտպանելու կ. Պօ-  
լսիր Ավարներից, երկրորդը կանգնած էր բանակով Քաղկեդո-  
նում յեսս մղելու Շահը Վարազին, երրորդ Հերակլի զօրավա-  
րութեամբ գնացած էր Պարսկաստան: Մի ամսուայ պաշա-  
րումից լետոյ Ավարները, տեսնելով որ պարսիկները առանց նա-  
ւատորմի չեն կարող անցնել շրանցքի եւրսպական կողմը, լետ  
նահանջուեցան կ. Պօլսից: Ալի միջոցին Հերակլը հրաւիրեց  
Խաղրաց \*\* խանին, որոնք ՎԼ-դարում առանձին խանութիւն  
էին կազմել Պարսից հիւսիսային կաւկասեան սահմաններում,  
մտնել Պարսկաստան, իսկ ինքը խաղաց գնաց իրանի մայրաքա-  
ղութ Տիգրոնի վրալ: Խոսրովի շուտափոյթ հաւաքած զօրքը շար-  
դուեց և Հերակլ (ձննդեան) Աստուածայայայտնութեան տօնը Յուն-  
վարի 6-ին 628թ. կատարեց շահի սիրած Դաստակերտում:  
Պարսափառար Խոսրով Ա-դ փախաւ տնցաւ Տիգրիսի միւս ավը  
Տիգրոնի այլ մասը: Հերակլ իւր զօրքի սակաւութեան պատ-  
ճառով անհնարին դտնելով քաղաքի նուաճումք, դարձաւ դէ-  
պի Գանձտէկ, քաջ արշաւանք կատարեց Քուրդիստանի լեռնե-  
րի միջով ձմեռնային բուքերին փետրուար ամսին: Հաղիւ թէ  
նոր էր հեռացել կայսրը, ինչպէս լունկարծ ժողովրդի համար

\*) Սեբէոսի մօտ-Շահը վարագ.

\*\*) Սոցա մասին տես Մովսէս Կաղանկատուացու «Աղու-  
նից պատմութիւն», էր. Մ. Էմինի. Մոսկու 1860.

ատելի դարձած Խոսրովի դէմ դաւադրութիւն կաղմուեց. նորան տապալեցին և շահ հրատարակեցին Կաւատ որդուն, որին հայրը բանտարգել էր: Կաւատ հրամայեց Խոսրովին սպանել (Փետրուարի 29 628 թ.): Գոռող Խոսրով II Ապրուէզի ժամանակ թագաւորութիւնը հասել էր համարեա թէ Աքիմենեանց օրերի մեծութեանը:

Կաւատ II (628 թ.) գահ բարձրանալով՝ սպանել տուեցիւր 18 մրցակից եղբայրներին, խաղաղութիւն խնդրեց Հերակլից և հրամայեց պարսկական զօրքերին դուրս գալ Սասորիթից: Շուտով նա մեռաւ և թագաւորեց նորա եօթք տարեկան Արտաշիր III որդին (628-630): Սորա ժամանակ նեստորական կաթողիկոս Իշու-Եարը Կենարար Սուրբ Խաչը Տիղրոնից բերեց Հերակլին, որ հանդիսաւոր կերպով կանգնեց երուսաղեմում: Արտաշիր հետ Հերակլ չկարողացաւ խաղաղութեան դաշն կապել, որովհետեւ երեելի զօրավար Շահը վարագը՝ Հերակլի հաւանութեամբ, իրան թագաւոր հռչակելով՝ սպանեց մանուկ Արտաշիր III-ին: Բայց ամիսու կէսից լետոյ ինքն էլ չարաշար մահով մեռաւ աւագանու, մեռքից, որ չէին կամենում, որ իրանց վրայ թագաւորէ իրանց հաւասար մի իշխան, որ սասանական տոհմից չէր: Գահ բարձրացաւ Խոսրով II-դի դուսար՝ Պուրան-դուխտ (ըստ Սերէսոսի Բրոր, գտւար Խոսրովայ) 630-631. սորան լաջորդեց նախ ոմն Պերող\*, ապա քոյրը Ազարմի-դուխտ, որ մեռաւ Ռլսառոմ զօրավարի մեռքից: Մի առժամանակ մեծամեծները պահպանում էին Ֆերրոխ-զադէ Խոսրովին, իսկ ուրիշները Խոսրով II թոռն Յաղկերա III-ին գահ բարձրացնելով Ֆարսում, սպանեցին Ֆերրոխ-զադէ Խոսրովին: Նոր և վերջին սասանեան թագաւորի դիմաւոր խորհրդականն էր քաջ Ռլսառոմ զօրավարը, որը սակայն չկարողացաւ փրկել իրանը Արտաշիրների աիրապետութիւնից և Յաղկերա III սպանուեց (651) Մերփում և Սասանեանց հարստութիւնը վերջացաւ:

Պրօֆ. Կրիմսկու այս երկը մենք տեղ տեղ թարգմանեցինք բառացի, երբեմ էլ քաղուածօրէն աւանդեցինք նորա բովան-

\* ) Սէրէսոսի մօտ—Խոսրով ոմն յաղգէ Սասանայ.

դակութիւնը, դանց առնելով գրուածքի այն մասերը, որոնք վերաբերում են Պարսից և Ասորոց գրականութեան. և որովհետև այս վերջինս, ինչպէս լայտնի է, մի ժամանակ մեծ ազգեցութիւն ունէր Հայոց նախակին դպրութեան վերայ, այդ պատճառով մի ուրիշ անդամ մենք կվերադառնանք դորան և կաշխատենք պատրաստել մի առանձին մենագրութիւն Ասորոց գրականութեան մասին: Սասանեան այս պատմութիւնը շատ հետաքրքիր է այն տեսակէտից, որ պարզ դադախար է տալիս մեզ Պարսկաստանի ներքին և արտաքին՝ դարերի ընթացքում մըշակուած, որոշ քաղաքականութեան մասին. բիւզանդացւոց կայսրութիւնն էլ իւր լարարերութիւնների մէջ օտար պիտութիւնների ու աղդերի հետ, ամենից առաջ գերադասում էր պետութեան շահերը և բատ այնմ վարում էր իւր քաղաքականութիւնը: Դորանից դուրք էր միայն Հայաստանը, որի աշխարհադրական դիրքը երկու մեծ տէրութիւնների մէջ՝ շատ յարմար էր մեծ և նշանաւոր պատմական գեր կատարելու Փոքր Ասիայում: Բայց ոորա համար հարկադոր էր փոխել Հայաստանում ներքին կառավարութեան ծեր, վերջ գնել աւատական կարգերին և օսեղծել կենդրոնական հզօր և միահեծան իշխանութիւն, ընդհանուր օրէնք բոլոր բնակչութեան համար պարտաւորիչ: Սակայն Հայոց նախարարութիւնը, իշխանները և սեպուհները չհասկացան ժամանակի պահանջները, նոյն համար, կարծես, ազգային շահեր գոյութիւն չունեն բնաւ: Եթէ նոցահոգերանութիւնը պարզելու դիտաւորութեամբ, մի բոպէ ալանանք հին հին դարուց խորքերը, մենք այն ժամանակ կաեսնենք, որ հայ իշխանները և նախարարները Արշակունեաց օտար հարստութիւնը ընդունեցին Հայաստանում իրեն մի աւելորդ շո այլութիւն, որի հետ, այս՝ երբեմն կարելի է հաշտուել, եթէ միայն դորանից իրանց շահերին վտանգ չէ սպառնում: Իսկ երբ թագաւորը խօսում էր և գործում Հայաստանի ընդհանուր շահերի տեսակէտից, նախարարներին անհասկանալի էր նորա լեզուն. կփորձէր թագաւորը պնդել իւր պահանջների վրայ և ահա իշխանների գաշնակցութիւնը պատրաստ էր զէն ի ծեռին պաշտպանել իւր իրաւունքները: Ինչպէս յայտնի է, Վռամ IV կրմանի

և ԹՇողոս Մեծի ժամանակ 390 թ. Հայաստանը բաժանեցին երկու մասերի՝ Պարսից և Հռովմայեցոց մէջ. հայ նախարարները չքողոքեցին դորա դէմ. 429 թ. Վասած Վ-զը վերջ դրեց Արշակունեաց թագաւորութեան Հայաստանում. նախարարները դարձեալ ծայն չհանեցին. ու լուռ մատցին. Ի՞նչով պէտք է բացատրել այս, ըստ երևոյթին, տարօրինակ վարժունքը հայոց աւագանու. նոցա կալուածտկան իրաւունքների ապահովութեամբ միայն, կպատասխանենք. Արշակունի թագաւորները դահ բարձրանարով, տմենից առաջ վաւերացնում էին իշխանների հին, նախնական արտօնութիւնները և դարեւոր իրաւունքները. Հայաստանը անցնում է Պարսից աիրապետութեան տակ, արքայից արքաները, հետևելով հայ Արշակունեաց օրինակին, նշյապէս ճանաչում են նախարարների իրաւունքները, անհնաղանդութեան առիթ չապահ համար նոցա: Պարսիկ մարզպանը կեղեքում է ժողովուրդը ծանր հարկերի տակ կամ բռնադատում է կրօնափոխութեան, հայ նախարարները իսկոյն մի Մամիկոնեանի ղեկավարութեամբ ապստամբում են, սպանում են մարզպանին, կամ պահանջում են շահից փոխել նորան. պահանջը կատարուում է: Մի ուրիշ անգամ նոքա խնդրում են տալ նոցա հայ մարզպան—թագաւորից մերժում չկայ, վասն զի նորան հարկաւոր է միայն Հայաստանից հարկեր ու տուրքեր ստանալ: Նշյն զիշողութեամբ են վերաբերուում հայ իշխաններին նաև Բիւզանդական կայսրները, որոնց մի քանիսը հայկական ծագումից են և հաւատով հայ-հոռոոմ: Այսպէս դարերի ընթացքում մեր իշխանները երեք կողմից երես առնելով, իւրեանց կալուածներում մի մի փոքրիկ բռնաւորներ են հանդիսանում ստորագրեալների վերաբերութեամբ, ժողովուրդը հլու հպատակ է նոցա ծեռքում, ճորտաւթեան հասցրած: Այսպիսի լմբոստ և ամբարտաւան իշխանների խելքը կարո՞ղ էր արդեօք կտրել, թէ ի՞նչ ասել է ազգային ընդհանուր շահեր, ազգային քաղաքականութիւն, երբ նոքա ազգի ոյժերը շլատում էին, ամբողջ գնդեր ու զօրաբաժիններ կազմակերպելով և հեռու հայրենիքից կռուելով Պարսկաստանի և Բիւզանդական կայսրութեան պայծառութեանհամար 'ի վասս մայր հողի և հայրենիքի:

Եթէ այժմ հին դարերից վերտառնանք արդի իրականութեան, մեղ համար պարզ կլինի, թէ ինչու հայութիւնը հասաւ այսօր այսպիսի ողորմելի դրութեան։ Մեղ վիճակուեց վայելելու մեր նախնեաց բոլոր ոգին, դորա բացասական յատկութիւններով։ Մենք ժառանգեցինք հայ իշխանների և նախարարների հոգեբանութիւնը. անցեալից ոչինչ չմոռացանք. իսկ վերշին չարիքներից չխրատուեցանք։ Աղջիս չարն ու բարին լաւ հասկանալու համար, հարկ է ուշի ուշով ուսումնասիրել մեր հին պատմութիւնը, զուգընթացարար զրացի պետութիւնների և աղջերի պատմական վիճակների հետ, որոնք անագին աղջեցութիւն են թողել Հայոց վրայ։ Հայերը երկնքից չեն ընկել և ինչպէս Խորենացին չէ կարելի բացատրել Խորենացիով, այնպէս էլ Հայոց պատմութիւնը չէ հնար բացատրել նոյն պատմութեամբ։

Մ. Շովեան